

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ  
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

#### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հակոբ Հակոբյանի, Սուքիաս Ավետիսյանի, Գագիկ Մելիքյանի, Գագիկ Գևորգյանի, Էդուարդ Շարմազանովի, Մանվել Ղազարյանի և Լևոն Սարգսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Համաձայն **1996** թվականի հունվարի **1**-ին ուժը կորցրած ճանաչված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **37**-րդ հոդվածի՝ աշխատանքային ստաժում հաշվառվում էր չաշխատող մոր կողմից երեխայի խնամքի ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ երեք տարի, սակայն **15** տարվանից ոչ ավելի:

Համաձայն 2003 թվականի ապրիլի 10-ին ուժը կորցրած ճանաչված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի փետրվարի 16-ի «Աշխատանքային ստաժում հաշվառվող աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակները, հաշվառման կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 41 որոշմանը համապատասխան աշխատանքային ստաժում հաշվառվում է նաև չաշխատող մոր կողմից յուրաքանչյուր երեխային՝ մինչև 3 տարին լրանալը խնամելու ժամանակաշրջանը՝ 9 տարվանից ոչ ավելի:

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքի 45-րդ հոդվածի՝ կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ 5 տարվա ապահովագրական (աշխատանքային) ստաժի առկայության դեպքում ստաժում հաշվառվում է նաև ծնողներից մեկի՝ մինչև յուրաքանչյուր երեխայի 2 տարին լրանալը երեխային խնամելու ժամանակաշրջանը՝ 6 տարվանից ոչ ավելի:

Հայտնում ենք, որ ԽՍՀՄ օրենսդրությամբ նույնպես աշխատանքային ստաժում հաշվառվել է չաշխատող մոր կողմից երեխայի խնամքի ժամանակահատվածը՝ յուրաքանչյուր երեխայի համար՝ 3 տարի, սակայն 15 տարվանից ոչ ավելի:

Այսպիսով, նպատակահարմար է համարվել բոլոր ժամանակներում երեխային խնամելու ժամանակահատվածը որպես ապահովագրական ստաժ հաշվառել՝ որոշակի սահմանափակումներով:

Ներկայացված օրենքի նախագծի ընդունումը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման, որի ֆինանսական գնահատականը հնարավոր չէ տալ՝ գործնականում հաշվարկների համար անհրաժեշտ էլակետային տվյալների ճշտման անհնարինության պատճառով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից և դրան անդրադառնալ կենսաթոշակային բարեփոխումների

շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվելիք «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի համատեքստում:

Իրավական առումով, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, նախագծի 1-ին հոդվածում «2003 թվականի մարտի 31-ի» բառերը փոխարինել «2002 թվականի նոյեմբերի 19-ի» բառերով:

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Համբարձումյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

### **ՕՐԵՆՔԸ**

**«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին**

**Հոդված 1.** «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի մարտի 31-ի ՀՕ-519-ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետից «՝ վեց տարուց ոչ ավելի» բառերը հանել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից:

### **Հիմնավորում**

**«Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության**

Նախագծով առաջարկվում է ծնողներից մեկին՝ յուրաքանչյուր երեխայի երկու տարին լրանալը երեխային խնամելու ժամանակահատվածը հաշվառել որպես ապահովագրական ստաժ՝ առանց սահմանափակումների:

Հեղինակներ՝

Հակոբ Հակոբյան,

Սուքիաս Ավետիսյան,

Գագիկ Մելիքյան,

Գագիկ Գետրոգյան,

Էդուարդ Շարմազանով,

Մանվել Ղազարյան,

Լևոն Սարգսյան

**25.02.2009**